Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
սեպտեմբերի 22-ի N 1333 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏՎՅԱԼՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում են բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից (այսուհետ՝ ռեգիստր) Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրվող տվյալները, դրանց տրամադրման կարգը և ժամկետները:

2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տվյալներն ստանում է աշխատակազմի՝ մարդահամարի և ժողովրդագրության կառուցվածքային ստորաբաժանման միջոցով (այսուհետ՝ բաժին):

3. Ռեգիստրը յուրաքանչյուր եռամսյակից հետո 5-րդ աշխատանքային օրը բաժնին է տրամադրում ռեգիստրում հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված անձանց (այդ թվում՝ անչափահաս) մասին հետևյալ տվյալները՝

1) սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

2) ծննդավայրը (երկիրը կամ Հայաստանի Հանրապետության մարզը, համայնքը, գյուղը կամ քաղաքը).

3) ժամանման վայրը (երկիրը կամ Հայաստանի Հանրապետության մարզը, համայնքը, գյուղը կամ քաղաքը, որտեղից եկել է).

4) քաղաքացիությունը (երկքաղաքացիության դեպքում՝ նաև այլ պետության քաղաքացիությունը).

5) ազգությունը.

6) կարգավիճակը (կացության կարգավիճակը կամ փախստական լինելը).

7) Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայրը (մարզը, համայնքը, գյուղը կամ քաղաքը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվելու (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետության բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու) դեպքում՝ երկիրը.

8) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ քրեակատարողական հիմնարկում գտնվելու դեպքում՝ նշում դրա մասին:

4. Ռեգիստրը յուրաքանչյուր եռամսյակից հետո 5-րդ աշխատանքային օրը բաժնին է տրամադրում ռեգիստրի հաշվառումից հանված անձանց (այդ թվում՝ անչափահաս) մասին հետևյալ տվյալները՝

1) սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը.

2) ծննդավայրը (երկիրը կամ Հայաստանի Հանրապետության մարզը, համայնքը, գյուղը կամ քաղաքը).

3) մեկնելու վայրը (երկիրը կամ Հայաստանի Հանրապետության մարզը, համայնքը, գյուղը կամ քաղաքը).

4) քաղաքացիությունը (երկքաղաքացիության դեպքում՝ նաև այլ պետության քաղաքացիությունը).

5) ազգությունը.

6) կարգավիճակը (կացության կարգավիճակը կամ փախստական լինելը).

7) Հայաստանի Հանրապետությունում հաշվառման վայրը (մարզը, համայնքը, գյուղը կամ քաղաքը):

5. Սույն կարգով սահմանված տվյալները տրամադրվում են էլեկտրոնային եղանակով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի համատեղ հրամանով հաստատված ձևաչափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ